Gift of the United States Government

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հայաստանում կորոնավիրուսի համատեքստում իմիգրանտների կարիքների գնահատման հիման վրա Միգրացիայի Միջազգային Կազմակերպությունը (ՄՄԿ) մտադիր է տրամադրել անհապաղ աջակցություն խոցելի միգրատներին սննդի և հիգիենայի, կացության և բժշկական հիմնական կարիքները հոգալու համար:

**ՈՎՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ՍՏԱՆԱԼ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ.**

- անկանոն միգրանտները (ում վիզայի/անձնական փաստաթղթերի ժամկետները լրացել են և այլն),
- ցածր որակավորում / եկամուտ ունեցող միգրանտները,
- արտասահմանցի ուսանողները,
- մերժում ստացած ապաստան հայցողները,

ովքեր գտնվում են ծանր տնտեսական վիճակում և ունեն սննդի և/կամ կացության հրատապ կարիքներ և/կամ բժշկական հրատապ խնդիրներ, որոնց լուծման համար առկա չեն ֆինանսական միջոցներ:

**ՈՎՔԵՐ ՉԵՆ ԿԱՐՈՂ ՍՏԱՆԱԼ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ.**

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող անձինք
- Հայաստանի Հանրապետությունում մշտական կացության կարգավիճակ ունեցող անձիք:

Աջակցություն ստանալու համար միգրանտների վերոնշյալ խմբերից որևէ մեկին և խոցելիության չափանիշներին համապատասխանող դիմորդները պետք է գրանցվեն անհատական հարցազրույցի համար մինչև 2020 թ. սեպտեմբերի 30-ը: Գրանցվել կարելի է.

- Հեռախոսազանգի միջոցով – **հեռ.՝ 043 18 00 28,**
- Առցանց գրանցման թերթիկը կամ
- Գրանցման թերթիկի թղթային տարբերակը լրացնելով, որը հասանելի է ՄՄԿ գրասենյակում հետևյալ հասցեով՝

**ՄՄԿ Հայաստանի առաքելություն**
ՄԱԿ գրասենյակ, Պետրոս Ադամյան 14, Երևան, 0010, Հայաստան
Հեռ.՝ + 374 043 18 00 28,
Էլ-փոստ՝ iomarmenia@iom.int

Շահառուների վերջնական ընտրությունը կկատարվի դեմ առ դեմ հարցազրույցների արդյունքների հիման վրա, որոնք կիրականացվեն ՄՄԿ Հայաստանի առաքելության գրասենյակում:

Շնորհակալություն ուշադրության համար:

ՄՄԿ Հայաստանի առաքելություն